# ՍԻՈՆ

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Բոլոր երկիրներու համար՝ ՍԻՈՆի Տարեկան բաժնեգինն է
Անգլ. Շիլին 6 (Ամեր. Տոլար 1.50) կամ անոր համարժէքը
Եռամսեայ կամ վեցամսեայ բաժանորդագրութիւն չկայ.
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԽԻԿ Է
Հասցէ՝ Rédaction de la Revue Arménienne SION
Patriarcat Arménien
JÉRUSALEM — Palestine

---

## ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸԴՆՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

**ՈՐԲԵՐՈՒ ԿԻՐԱԿԻՆ**
**ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐԸ**

*Սիրելի Հայրենակիցներ,*

*Ամերիկեան Նպաստամատոյցն էր որ առաջին անգամ յղացաւ եւ գործադրեց Ոսկեղէն Պատուիրանքը, յօգուտ այն բազմահազար Որբերուն որոնց պաշտպանութիւնը ստանձնեց պատերազմէն վերջ։ Այդ գեղեցիկ օրինակին հետեւեցաւ նաեւ մեր Միութիւնը որուն խնամքին յանձնուած էին բազմաթիւ որբեր, զոհերը հայ մարտիրոսագրութեան, թանկագին աւանդը զոր ազգին կտակեցին հայ նահատակները։ Ըրէ՛ք ուրիշներուն ինչ որ պիտի ուզէիք որ ուրիշները ընէին ձեզի. ահա՛ Ոսկեղէն պատուիրանքը որուն սուրբ պատգամը տարիներէ ի վեր խօսեցաւ Հայ սիրտերուն, թախծութեամբ եւ քաղցրութեամբ։*

*Այս տարի, բացառիկ նշանակութիւն մը կ'առնէ այս պատգամը, որովհետեւ համաշխարհային տնտեսական անօրինակ տագնապը յառաջ բերաւ այնպիսի յեղաշրջումներ, որ կարելի չէ չի մտահոգուիլ թէ ինչ պիտի ըլլայ ճակատագիրը մեր Որբանոցներուն եւ որբերուն, մեր դպրոցներուն եւ տուներուն։*

*Այս տարի, Որբերու Կիրակին պիտի սկսի 6 Դեկտեմբերին եւ պիտի վերջանայ յաջորդ տարուան 31 Յունուարին։ Այդ օրը պիտի չըլլայ միայն Որբերուն Օրը, այլ բացառաբար հայ Մշակոյթի Օրը եւս, որովհետեւ նուիրահաւաքութեանց գումարը պիտի գործածուի կէս առ կէս Որբանոցներուն եւ Վարժարաններուն, որ, կանգուն մնալու համար, աւելի քան ուրիշ ոեւէ ժամանակ պէտք ունին հայ ժողովուրդին զոհողութեան ոգիին, որպէս կոթողները հայ կամքին եւ կորովին, որպէս լուսարձակ փարոսները տարագիր հայութեան, որ գիտէ անփոխարինելի արժէքը հայ մշակոյթին եւ անոր մէջ կը տեսնէ յաղթանակը ազգապահպանումի մեծ ճիգին։*

*Ուստի, կը խնդրենք որ ամէն տեղ, եւ այս տարի Ամերիկայի մէջ ալ անխտիր ու անվարան, Միութեանս Մասնաճիւղները եւ Որբախնամները անմիջապէս կազմեն նուիրահաւաք շրջիկ խումբեր, անձնուէր կամաւորներէ եւ կամաւորուհիներէ, որ անձամբ դիմեն ամէն Հայու, եւ կամ, հոն ուր այդ բանը կարելի չըլլար, սարքեն այդ նպատակին նուիրուած հասութաբեր հանդէսներ։*

*Տարակոյս չունինք որ հայ խղճմտանքին ուղղուած այդ կոչը արձագանգ պիտի գտնէ ամէնէն հեռաւոր եւ ամէնէն խոնարհ խուներուն մէջ իսկ, եւ ամէն Հայ պիտի չզլանայ իր լուման, ցաւեր ամոքելու երջանկութիւնը եւ ազգապահպանումի փրկաւէտ գործին սատարելու հպարտութիւնը եւս վայելելու համար։*

*Սիրելի հայրենակիցներ, յիշեցէ՛ք հայ որբը, գոնէ տարին անգամ մը անոր նուիրելով վայրկեան մը, եւ օգնեցէ՛ք հայ դպրոցին, ընծայելով ձեր տարեկան տուրքը, փոյթ չէ թէ համեստ ըլլայ։*

Բարիզ, 15 Նոյեմբեր 1931

ՆԱԽԱԳԱՀ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ
**Գ. Ա. ԳԻՒԼՊԷՆԿԵԱՆ**

digitised by A.R.A.R.@

# ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ
## Ս. ԱԹՈՌՈՅՍ ՏՊԱՐԱՆԷՆ

**ԺԱՄԱԳԻՐՔ**
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ
ԱՐԱՐԵԱԼ
**Ս. ՍԱՀԱԿԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ**
ԵՒ
**ՄԵՍՐՈՊԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ**
ԳԻՒՏՈՑ ԵՒ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆՒՈՅ

Դ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

**ԵՐՈՒՍԱՂԷՄ**
ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
1932

Ընտիր եւ դիմացկուն թուղթի վրայ. փոքրադիր (11 սանտիմետր երկայն, 7½ սնտ. լայն եւ 2 սնտ. հաստ). մաքուր եւ յստակ տպագրութիւն:

Այս ձեւով առձեռն կոկիկ ժամագիրքի մը պէտքը արդէն ի վաղուց կը զգացուէր գրպանի գործածութեան համար:

Դ. տպագրութեամբ ի լոյս ընծայեցաւ նկատի ունենալով որ հայ հաւատացեալին եւ ժամասէր հայ մանուկներուն մեծ դիւրութիւն մը ընծայուած պիտի ըլլայ անով աստուածային պաշտամունքներու հետեւելու:

Գինն է
*Լաթակազմ* 75 *սենթ ամերիկեան*
*Պաղեստինի մէջ՝* 150 *միլ*
Պոստի ծախքը գնողին վրայ:

*ՕՐԱՑՈՅՑ 1932 Նահանջ տարւոյ (ըստ Հին Տոմարի) հանդերձ Յաւելուածով: Գինն է 2 Ե. Դ.,*

*ՄՇԱԿՆ ՈՒ ՎԱՐՁՔԸ, Ամն. Տ. Եղիշէ Դուրեան Ս. Պատրիարքի Քահանայական Յիսնամեայ Յոբելեանին Նուիրուած: Գինը 1 դոլար 25 սենթ:*

*ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ, Տիգրան Հ. Թ. Սաւալանեանց, Երկու Հատոր, գրաբար բնագիրէն աշխարհաբարի վերածեց Մեսրոպ Եպս. Նշանեան: Գին երկու հատորի 1 դոլար:*

*ԽՈՀՔ ԵՒ ԽՕՍՔ, Իր կեանքի վերջին շըրջանին մէջ (յետ մահու հրատարակութիւն), Մաղաքիա Արքեպս. Օրմանեան: Գին 1 դոլար:*

*ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ, Նկարագիր Աթոռոյ Սրբոց Յակոբեանց, Մաղաքիա Արքեպս. Օրմանեան: Գին 25 սենթ:*

*ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ՎԱՆՔԵՐ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ Ս. Երկրին մէջ, Ուսումնասիրութիւններ, Մկրտիչ Եպս. Աղաւնունի: Գին 75 սենթ:*

*ՄԻԱԲԱՆՔ ԵՒ ԱՅՑԵԼՈՒՔ Հայ Երուսաղէմի, Մկրտիչ Եպս. Աղաւնունի: Գին 50 սենթ:*

*ԱԶԳԱՊԱՏՈՒՄ, Գ. Հատոր, Մաղաքիա Արքեպս. Օրմանեան: Գին 5 դոլար: Ս. Աթոռոյս Տպարանը կը գտնուի նաեւ Ա. և Բ. Հատորները, իւրաքանչիւր հատոր 5 դոլար:*

*ՆԱՐԵԿ, Աղօթամատեան Ս. Գրիգոր Նարեկացւոյ. Արդի հայերէնի վերածեց՝ Թորգոմ Եպիսկոպոս. Բ. Տպ. 1931. Գին լաթակազմ 75 սենթ:*

## ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

*Պուէնոս Այրէսէն Ռեբեկա Ճէրահեան անուն տիկին մը կը փնտռէ Նիյտէցի Հաճի Խորէն Հայրապետեանը, որ կը կարծուի թէ այս կողմերն է եղեր: Կնոջ անունը Մաքրուհի. ունին չորս զաւակ, որոնցմէ մին Հայկ անունով Բեթղեհէմի մէջ կը կորզայ եղեր: Տեղեկութիւն ունեցողը կըրնայ գրել ՍԻՈՆի խմբագրութեան հասցէով:*

digitised by A.R.A.R.@

# ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

## ՊԱՏԱՆԻԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Հրտ. «Սահակ-Մեսրոպ». Հասցէ՝ "Sahag-Mesrob" 25, Chareh Tewfik, Cairo Egypte.

43, 44. *Բ. Շարք. Թիւ 4 և 5. երեսներ՝ 1–24 և 24–53.* ***ԷՏԻՍՕՆ ԵՒ ԻՐ ԿԵԱՆՔԸ։***

45. *Թիւ 18. երես՝ 79–99.* ***ԱՐՇԱՒՆԵՐ ԴԷՊԻ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԲԵՒԵՌ, ԲԵՐԻ ԵՒ ՊԸՐՏ։***

46. *Թիւ 19. երես՝ 103–123.* ***ՊԻԶԱՐՕ ԵՒ ԻՆՔԱՑԻ գանձերը։***

## 47. ՀԱՄԱՅՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, 1931

Համախմբեց եւ գծագրեց՝ *Յովհ. Գ. Պապէսեան*. Գին՝ 6 ֆրանք կամ 1,5 շիլին։ Հասցէ՝ H. K. Babessian, 1 bis, Rue Rouget-de-Lisle, Choisy le roi (Seine), France.

## 48. ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ ԵՒ ՎԻՊԱԿՆԵՐ

*Արփիար Արփիարեան*։ Հրտ. «Նահատակ Գրագէտներու Բարեկամներ»ու։ Մատենաշար Թիւ 5. Պարիս, 1931, երես՝ 248։

## 49. ԿԵԱՆՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

*Տարեգիրք*, Բ. Տարի. 1932։ Հրտ. «Շանթ», 94, Rue Lafayette, Paris(10e)։ Խմբ. *Մ. եւ Մ. Պարսամեան*։ Տպգր. «Մասիս», Պարիս։ Երես՝ 192, Գին՝ 1.50 դոլար։

## 50. ԳԻՇԵՐԷՆ ՄԻՆՉԵՒ ԼՈՒՍԱԲԱՑ

*Կ. Միսաք*, 1931. Երես՝ 168. Գին՝ 1 դոլար։ Հրտ. Central Printing Co. 401, Broad Str. Philadelphia, Penna.

## 51. 1932, ԿԱՎՌՕՇԻՆ ՏԱՐԵԳԻՐՔԸ

22րդ տարի։ 95 երգիծանկարներ, Michel Hovikian. Տպարան՝ «Մասիս», Պարիս։ Երես՝ 288, Գին՝ 30 ֆրանկ։

---

## ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ս. Աթոռոյս Տպարանէն գիրք ապսպրողներ պէտք է նկատի ունենան թէ պոստի ծախքը միշտ գնողին վրայ է։

---

digitised by A.R.A.R.@